

Անանուն պատմիչի երկի բառապաշարի նորաբանությունները և դրանց բառակազմական կաղապարները

Ղուկասյան Շողիկ

***Հանգուցային բառեր.** հեղինակային նորակազմություններ, բառակազմական կաղապարներ, անհոդակապ բարդություններ, իսկական բարդություններ, բառաձանցում, բառաբարդում, համադասական հարաբերություն, ստորադասական հարաբերություն*

Հայ ժողովրդի պայքարը արաբական տիրապետության դեմ 10-րդ դ. պսակվում է հաջողությամբ, և սկսվում է երկարատև խաղաղության մի շրջան, որը լավագույն պայմաններն է ստեղծում երկրի տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման համար: Սկսվում է հայ մտքի Վերածնունդը, որն իր բարձրակետին է հասնում 10-րդ դ. վերջին և 11-րդ դ. սկզբին: «X-XI դարերը հայ ժողովրդի պատմական անցյալում տնտեսական և կուլտուրական մեծ և անօրինակ վերելքի շրջան էին»¹: Այս շրջանում ծաղկում են ճարտարապետությունը, որմնանկարչությունը, մանրանկարչությունը, քնարերգությունը, պատմագրությունը: 10-րդ դարից մեզ են հասել հանձարեղ ճարտարապետական հուշարձաններ՝ եկեղեցիներ, պալատներ, կամուրջներ, որոնց մասին ամենայն մանրամասնությամբ հիշատակել են այդ և հետագա դարերի պատմիչները: Բուռն թափով սկսում է զարգանալ նաև մատենագրությունը: 10-րդ դ. մատենագրության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ը, Թովմա Արծրունու «Պատմութիւն Տանն Արծրունեաց» և սրան կցված Անանուն մատենագրի երկերը, Ուխտանեսի «Պատմութիւն Հայոց»² և Մեսրոպ Վայոցձորցու «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթևի Հայոց հայրապետի» երկերը:

Երկար ժամանակ Թովմա Արծրունու և Անանունի երկերը համարվել են նույն հեղինակի գործ, հրատարակվել են իբրև մի երկ՝ Թովմա Արծրունու հեղինակությամբ: Պատճառն այն է, որ Թովմա Արծրունու պատմությունը թերի է, ավարտվում է ԻԹ անավարտ գլխով, որից հետո պատմությանը կցվել է Անանուն մատենագրի երկը, որը նույնպես թերի է. պակասում են առաջին գլխի սկիզբը և երկրորդ գլխի վերջին մասը: Տարիներ շարունակ Անանունի պատմության սկիզբը դիտվել է իբրև Թովմայի երկի անավարտ գլխի շարունակություն, իսկ մյուս մասերը՝ որպես Թովմայի պատմության չորրորդ դպրություն: Դրանց՝ երկու տարբեր հեղինակների գրչի պատկանելու օգտին է խոսում այն փաստը, որ շատ

¹ Հ.Մանանդյան, Հայաստանի քաղաքները X-XI դարերում, Եր., 1940, էջ 5:

² Երկը բաղկացած է երկու հատվածից: Ա հատվածը վերնագրված է «Պատմութիւն հայրապետաց եւ թագաւորաց Հայոց», Բ հատվածը՝ «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց»:

հաճախ երկու գրքում էլ պատմվում է միևնույն դեպքը՝ բերվելով, սակայն, տարբեր փաստեր: Երբեմն նրանց բերած տվյալները հակասում են իրար³: Տարբեր են նաև երկու հեղինակների քաղաքական հայացքները: Եթե Թովմա Արծրունին քննադատաբար է խոսում Արծրունիների դավաճանության մասին, գովաբանում է Աշոտ և Սմբատ Բագրատունիներին՝ անվանելով «այր քաջայայտ և հանճարեղագոյն», «բարձրագոյն և հանճարեղագոյն», չի մոռանում մյուս հայրենասեր գործիչներին, ապա Անանուն պատմիչը Արծրունիներին բացահայտորեն բարձր է դասում բոլորից՝ բոլորովին անտեսելով Բագրատունիներին: Նա Գագիկ Արծրունուն ներկայացնում է իբրև բովանդակ Հայաստանի թագավոր՝ բոլորովին հաշվի չառնելով Բագրատունի թագավորների գոյությունը: Նրա բացասական վերաբերմունքը Բագրատունիների նկատմամբ հասնում է նույնիսկ այն աստիճանի, որ ամբողջովին արդարացնում է արաբ ոստիկան Յուսուֆի չարագործությունները, որոնց միակ մեղավորը համարում է Սմբատին, որն ընդդիմացել էր Աստծո կամքին՝ չտալով «զկայսերն կայսեր, և զԱստծոյն Աստուծոյ», այսինքն՝ արաբներին չէր կամեցել հարկ վճարել. «Ձայս հրաման տէրունեանն յետս հարեալ Սմբատայ՝ շարժեաց զբագում չարիս ի վերայ սուրբ եկեղեցոյ և ժողովրդեանն տեառն» (Անան., 440):

Ուսումնասիրողները Անանունին նույնպես համարում են Արծրունի: Մ.Աբեղյանը կարծում է, որ Գագիկ Արծրունին, չբավարարվելով Թովմա Արծրունու երկով, մի երկրորդ պատմիչի էլ է գրել տվել իր ժամանակի պատմությունը⁴: Անանունի երկը նվիրված է Գագիկ Արծրունուն և նրա տոհմի պատմությանը:

Քննելով Անանուն մատենագրի երկի բառապաշարը՝ տեսնում ենք, որ չնայած Անանունի պատմությունից մեզ է հասել ընդամենը մի հատված, այնուամենայնիվ ծավալով ոչ մեծ այդ ստեղծագործության մեջ ավելի շատ նոր բառեր և բառաձևեր ենք գտնում, քան նրա ժամանակակից Ուլխտանեսի՝ ծավալով անհամեմատ ավելի մեծ երկում: Դրանք հիմնականում բացատրված են ՆԲՀԼ-ում, ԱԲ-ում և ՀԱԲ-ում: Բոլոր բառերը կազմությամբ բաղադրյալ են և հավանաբար Անանունի նորակազմությունները: Այդ բառերն են՝

Ակնավճիտ «պարզ, զուլալ» (450), **ահաորատես** «տեսքով ասեղ» (454), **ամենաջողակ** «ամեն ինչում հաջողակ» (432), **անդնդադուղակ** «անդունդում լող տվող, ծովային»⁵ (440), **աստուածայորդոր** «աստուծոց բխած» (470), **արեգակնահրաջ** «արեգակի նման հրաշալի» (452), **բագնաձե** «բագինի նման»

³ Դերենիկ Արծրունու մահվան ժամանակ Թովման նրա մեծ որդուն՝ Աշոտին համարում է 9 տարեկան (տե՛ս Արծր., 354), Անանունը՝ 12 տարեկան (տե՛ս Անան., 416): Դերենիկի կնոջ մահը Թովման տալիս է ամուսնու մահից մեկ տարի ութ ամիս հետո (տե՛ս Արծր., 356), Անանունը՝ յոթ ամիս հետո (տե՛ս Անան., 418):

⁴ Տե՛ս Մ.Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968:

⁵ *Լոռիիլ/դոռիլ* բայից, որ նշանակում է «լող տալ»:

(460), **բանագարդութին** «պաճուճագարդ, ճարտար խոսք» (430), **բարձընկալ** «բարձրաստիճան»⁶ (440), **բերկրաբեր** «ուրախություն բերող» (470), **բարեժմիտ** «բարի ժպիտ ունեցող, ժպտուն»⁷ (416), **գերահրաշապես** «հիանալիորեն, հրաշալի կերպով» (458), **դենադարձ** «հավատափոխ, հավատուրաց»⁸ (426), **երկնահարթ** «երկնքի նման» (458), **երրեջանիկ** «երիցս երջանիկ» (436), **թնդական** «թնդացող» (470), **ինքանահաս** «հասած և ինքն իրեն ընկած» (430), **խորովակսկիծ** «դառը, սրտամաշ» (412), **կամարակիցք** «կամարակապ» (456), **կապարայօղ** «կապարով միացած»⁹ (422), **կարծեցուցիչ** «թվացյալ, կասկածելի» (472), **կորզիչ** «կորզող, դուրս քաշող» (470), **կրծաբախ** «կուրծք ծեծող» (412), **ձինահոր** «ձյունով լի փոս» (452), **ճակատահար** «ճակատային հարվածող»¹⁰ (414), **ճեմարանոց** «գրոսատեղի» (452), **ճշգրտագործել** «ճշգրիտ կերպով, նույնությամբ սարքել» (462), **մահարբոց** «մահաբեր» (412), **մարգարտահիս** «մարգարիտներով հյուսված, զարդարված» (414), **նիզակախուռն** «նիզակավոր բազմություն» (468), **շղթայակապ** «շղթաներով կապված» (468), **ոսկեհրաշ** «ոսկեհյուս» (442), **ոսկեսաղարթ** «ոսկետերև» (470), **պատկերատիպ** «պատկերի նման» (452), **պարանոցատանջ** «շատ բարձր, նայողի պարանոցը ցավեցնող» (434), **պարսպաուրել** «ամրացնել, պարսպապատել» (450), **ջոկանալ** «հավաքվել»¹¹ (470), **սահանակարկաջ** «կարկաչահոս»¹² (452), **սպետափառ** «փառահեղ կամ սպիտակափառ»¹³ (470), **վայելչաուր** «վայելույշ, գեղեցիկ» (470), **վանգին** «ձայն, հնչում» (442), **վերջամնացութիւն** «վերջում մնալը» (446), **տախտածեւ** «աթոռի նման» (454), **տողադրել** «ուղիղ շարքով դնել»¹⁴ (454), **ուղբեկ** «ուղիղ կտրված»¹⁵ (470), **քաջահաս** «սուր, հատու, լավ կտրող» (410), **օղաբեր** «թարմաշունչ» (452):

«Ձայաու ժամանակաւ առաքին յարքունուստ պատգոսք պատուաւորք զօրօք բազմօք» (444) նախադասության մեջ գործածված **պատգոս** բառի իմաստը ճշտված չէ: ՆԲՀԼ-ի և ՀԱԲ-ի հեղինակները ենթադրում են «պատվիրակ, դեսպան»

⁶ *Բարձ* բառի «պատվի աստիճան» նշանակությունից:

⁷ *Ժմիտը* ժպիտ բառի տարբերակն է:

⁸ *Դեն* նշանակում է 1. պարսկական կրոնը, 2. աղանդ, սուտ կրոն»:

⁹ *Յող* նշանակում է կապ»:

¹⁰ *Շար* «զարնել, խփել» արմատից:

¹¹ *Ջոկ* նշանակում է «խումբ»:

¹² Անանունը բառը կազմել է 5-րդ դարից ավանդված *կարկաջասահ* բառի բաղադրիչների հակառակ շարադասությամբ:

¹³ *Սպետափառ* բառը ՆԲՀԼ-ն բացատրում է իբրև «սպիտակափառ» կամ «ասպետափառ», ՀԱԲ-ը ճիշտ է համարում «սպիտակափառ» մեկնությունը:

¹⁴ *Տող* նշանակում է «ուղիղ շարք»:

¹⁵ ՆԲՀԼ-ն այս բառը համարում է անստույգ, որ պետք է լինի կամ աղբեկ՝ իբրև ալեխառն, կամ ուլե բեկ, այսինքն՝ այծի, ուլի մագի նման բեկբեկյալ: ՀԱԲ-ը բառն ուղղում է աղբեկ, իսկ ԱԲ-ն բացատրում է «ուղիղ ձևով»: Ճիշտ ենք համարում այս վերջին բացատրությունը, քանի որ աղբեկ նշանակում է «ալեխառն», իսկ Անանունը նույն նախադասության մեջ նշում է, որ նրա մագերը սև էին, «թխակերպ»:

իմաստը: Նախադասության իմաստը խոսում է այս ենթադրության օգտին:

Այս բառերից քառասունվեցը բացատրված են ՆԲՀԼ-ում և ՀԱԲ-ում, իսկ **բանազարդութիւն** և **բարձրնկալ** բառերը գտնուում ենք միայն ԱԲ-ում:

Անանունի պատմության մեջ հանդիպող նոր բառերի մի մասը գործածական է նաև ժամանակակից հայերենում, ինչպես՝ *խորոպակսկիծ*, *օղաբեր*, *ահավորատես*, *ոսկեսադարթ*, *ոսկեհրաշ*, *վայելչավոր*, *բերկրաբեր*, *ձյունահոր*, *պատկերատիպ*, *մարգարտահյուս*, *ակնավճիտ*, *արեգակնահրաշ*, *կորզիչ*, *շղթայակապ* և այլն: Որոշ բառեր, չնայած այսօր էլ հանդիպում են, սակայն շատ հազվադեպ գործածություն ունեն, ինչպես՝ *տողադրել*, *թնդական*, *բանազարդություն* և այլն: Մի քանի բառեր, թեև հետագայում գործածվել են այլ հեղինակների կողմից, բայց այժմ արդեն հնացած բառեր են, ինչպես՝ *երկնահարթ*, *դենադարձ*, *աստվածահորդոր* և այլն:

Անանունի բառապաշարում հանդիպող նորաբանությունների առատությունը պայմանավորված է նրա լեզվի հարստությամբ ու ճոխությամբ: Նա նկարագրում է շքեղ ու պատկերավոր արտահայտություններով, իր հերոսների և՛ արտաքին նկարագրություններում, և՛ նրանց հույզերն ու զգացմունքները բացահայտելու ժամանակ, և՛ թե նրանց գործունեությունը գնահատելիս Անանունը միշտ գտնում է հարմար մակդիրներ ու համեմատություններ, հմտորեն է օգտվում և՛ հին հայերենի հարուստ բառազանձից, և՛ բաղադրությունների միջոցով ստեղծում է իր տպավորություններն առավել ցայտուն արտահայտող բառեր: Այսպես՝ Ամյուկ ամրոցը նկարագրելիս ամրոցի բարձրությունը ցույց տալու համար չգտնելով ավելի դիպուկ մակդիր՝ կազմել է նոր բառ՝ *պարանոցատանջ*, այսինքն՝ այնքան բարձր, որ նայողի պարանոցը ցավում էր. «Իսկ զբերդն Ամիկ զգարմանային զամրոցն, զոր երկնապիշ և պարանոցատանջ իմս գիտե անուանել բան՝ բազում ծախիւք և բազմագումար արուեստաւորօք յերևելիս հրաշակերտէ շինուածս» (434): Միայն Գագիկ Արծրունուն նկարագրելիս կերտել է տասը նոր բառ՝ հիմնականում ածականներ... «Վասն որոյ և շնորհեաց նմա պատկեր լուսագարդ և հասակ փառաց անհամեմատ ի մէջ ամենայն մտեղեաց բանական ազգի. հարթ և ուղիղ հասակաւ, վայելուչ և պայծառ երեսօք. հեր գլխոյ նորա թխակերպ, գանգուրագեղ գլխաւորութեամբ *ուղեբեկ ջոկացեալ* ի վերայ *սպետափառ* ճակատուն յոյժ խռոնախիտ թանձրութեամբ... Ունչք երկայնագոյնք և *վայելչաւորք*, լւելիք դիրաւուրք և դիրահաւանք ի բարիս և պայծառք լուսահրաշ նմանեալ գունով: Նա գաղտնի նենգութեանց թշնամեաց նախատեսող և կարթ *կորզիչ*: Նա սիրելեաց և կամարարաց իւրոց անծախ պարգև, այլ և անուշահոտ բուրաստան, լի համապայծառ ծաղկովք: Նա տուն իւրում կանաչ տունկ *ոսկեսադարթ*, լի *աստուածայորդոր* սիրով և բերկրաբեր աւետիք... Նա խարդախող և *կարծեցուցիչ* հրովարտակաց և պատգամաց այլազգեաց յղելոց առ նա հուր ծախիչ» (470):

Կենդանի, ազդու և գեղարվեստական մեծ ուժով է պատկերում Գրիգոր-

Դերանիկ իշխանի սպանության և նրա կնոջ՝ մեծ տիկին Սոփայի ողբի տեսարանները՝ նկարագրություններում գործածելով նաև բազմաթիվ նոր բառեր՝ *խորովակակիծ, մահարբոյց, կրծարախ, ճակատահար, մարգարտահիւս, քարեծմիտ* և այլն: Այս հատվածում գործածված *ախոյեանարձակ* բառը գտնում ենք միայն Թովմա Արծրունու և Անանունի պատմություններում. «Ո՞վ որ զայդ գործել համարձակեցաւ, ո՞վ որ զոսկեփետտոր *ախոյեանայարձակ* քաջագգի վարուժանն իմ հաւահար առնել կամ ի ծուղակ ըմբռնել կարողանայր, և ոչ ինքն օձտեալ ի նմանէն մեռանէր» (Անան., 414), «Եւ յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն» (Թովմ., 330):

ՆԲՀԼ-ն այս բառի համար վկայում է միայն Թովմա Արծրունուն, քանի որ բառարանը կազմելու ժամանակ այս երկու երկերը համարվել են մեկ հեղինակի, այն է՝ Թովմա Արծրունու ստեղծագործությունը: Հավանաբար բառը կամ հատուկ է եղել միայն Վանի խոսվածքին, կամ այլ հեղինակների կողմից չգործածվելը միայն պատահականության արդյունք է:

Անանունը հատուկ ուշադրություն է դարձնում Գագիկ Արծրունու իրականացրած շինարարական աշխատանքներին և մեծ սիրով ու ամենայն մանրամասնությամբ նկարագրում է դրանք՝ բնութագրելով նաև սեփական բառերով. «Եւ շինուած տաճարին ի հիմանց անտի մինչև զգլուխ նորին ի թռիչս կազմեալ առանց սեանց ունի զհաստատութիւն և որ արդարն արժանի զարմանալոյ ի վեր քան զմիտս: Ունի ի խորանս *կամարակիցս* և անկիւնս և շրջապատս գեղապաճոյճս, անթիւ մտաց և անգննելի աչաց. ունի և զումբէթս *երկնահարթս* ոսկեզարդս և լուսաճաճանչս, յոր թէ նայել որ կամիցի՝ իբր թագաւորի իմն պատիւ առնելով՝ նախ ի բաց առցէ զխոյր գլխոյն, և ապա տանջեալ զպարանոցն¹⁶ հազիւ թէ նշմարել կարիցէ զգանազան դեղոցն կերպագրութիւնս... Այլ եթէ զամենայն զգարդ շինուածոյն, զոսկեզարդ փողոցսն և զգումբէթակապ խորանայարկսն և զգանազան տեղիս գահոյիցն, որք առաւել այլակերպութեամբ մի քան զմի *գերահրաշապէս* փայլեն՝ և ըստ արժանեացն մանրամասնաբար զովասանել որ կամիցի՝ կարծեմ թէ յանհասութիւն ձկտեալ տատանի, որ և հասանելոյ չէ կարողութիւն» (458):

Պատմության մեջ հանդիպող նոր բառերը հիմնականում իսկական բարդություններ են՝ բաղադրված հետևյալ կաղապարներով՝

1. Ածական + հոդակապ + գոյական – ահաւորատես, բարեժմիտ (բարի + ա + ժմիտ):
2. Գոյական + հոդակապ + ածական – ակնավճիտ, արեգակնահրաշ,

¹⁶ «Տանջեալ զպարանոցն» արտահայտության փոխարեն Անանունը մեկ այլ տեղում գործածում է *պարանոցատանջ* նորակազմությունը. «Բսկ զբերդն Ամիկ զգարմանալին զամրոցն, զոր երկնապիշ և պարանոցատանջ իմն զիտ անուանել բան» (434):

երկնահարթ, կամարակից, նիզակախոտն, ոսկեհրաշ (ոսկի + ա + հրաշ):

3. Գոյական + հոդակապ + բայահիմք – աստուածայորդոր, բերկրաբեր, դենադարձ, կապարայօթ, կրծաբախ, ճակատահար, մարգարտահիւս, շղթայակապ, պարանոցատանջ, օդաբեր:
4. Գոյական + հոդակապ + գոյական – անդնդադուղակ, բազմաձև, բանագարդութիւն, ձիւնահոր, պատկերատիպ, ոսկեսադարթ (ոսկի + ա + սադարթ), տախտաձև:
5. Բայարմատ + հոդակապ + բայարմատ – խորովակսկիծ:
6. Դերանուն + հոդակապ + բայարմատ – ինքնահաս:
7. Ածական + հոդակապ + բայարմատ – քաջահատ:
8. Գոյական + բայահիմք – բարձրնկալ, մահարբոյց:
9. Թվական + ածական – երբերջանիկ¹⁷:

Այս բոլոր բաղադրյալ բառերում անվանական հիմքը համընկնում է ուղղական հոլովածին, ինչպես *բարձրնկալ*, *մահարբոյց*, *տախտաձև* և այլն: Հիմքի վերջնականի ձայնավորը երբեմն ենթարկվել է հնչյունափոխության, ինչպես՝ *երկնահարթ* (երկին), *անդնդադուղակ* (անդունդ), *կրծաբախ* (կուրծ), *մարգարտահիւս* (մարգարիտ), *բազմաձև* (բազին):

Իբրև բայական հիմք հիմնականում հանդես է գալիս բայարմատը, որը մի դեպքում համընկնում է պարզ բայերի ներկայի հիմքին, ինչպես՝ *բերկրաբեր*¹⁸, *աստուածայորդոր*, *ճակատահար*, *կրծաբախ*, *խորովակսկիծ*, *բարձրնկալ*, մյուս դեպքում՝ անցյալ կատարյալի արմատական հիմքին, ինչպես՝ *ինքնահաս*, *դենադարձ*, *քաջահատ*: Մահարբոյց բառում բայական հիմքը համընկնում է պատճառական բայի անցյալ կատարյալի հիմքին:

Բարդությունները հիմնականում կազմվել են հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխան: Հայերենին խորթ կազմություններ են *խորովակսկիծ* և *սահանակարկաջ* բառերը: Մրանցում գերադաս անդամը հունարենի նմանողությամբ բաղադրության առաջին բաղադրիչն է:

Անանունի պատմության մեջ գտնում ենք չորս նոր բայ՝ *ճշգրտագործել*, *պարսպաւորել*, *ջոկանալ*, *տողադրել*, որոնցից երեքը բայածանցագուրկ են, մեկը՝ *ջոկանալ* բայը ունի -ան- սուկածանց:

Սակայն բայածանցագուրկ երեք բայերի բայահիմքերն էլ բաղադրյալ են՝ հետևյալ կաղապարներով.

1. Արմատ + հոդակապ + արմատ - ճշգրտագործ (ել), տողադր (ել):
2. Արմատ + վերջածանց – պարսպաւոր (ել):

Ճշգրտագործել և *ջոկանալ* բայերը կազմվել են *ճշգրտագործ* և *ջոկ* բառերից՝

¹⁷ Ի տարբերություն երեք արմատի այլ տարբերակների, *էրը* ձևը դասական գրաբարում բաղադրությունների մեջ հանդես չի եկել, այն հանդիպում է ավելի ուշ գործածված մի խումբ բառերում և սահմանափակ գործածություն ունի:

¹⁸ *Բերել* բայի ն՝ ներկայի, և՛ կատարյալի հիմքն է բեր:

դերբայական -ել, -ալ վերջավորությունների միջոցով: *Պարսպաւորել* բայը կազմվել է գրաբարում գոյություն ունեցող *պարսպել* բայից՝ -աւոր ածանցի միջոցով և գործածվել է նույն նշանակությամբ: *Տողադրել* բայի կազմության եղանակը բառաբարդումն է՝ *տող* և *դնել* բառերից: Ըստ ՆԲՀԼ-ի՝ հետագայում Կոստ. Երզնկացին (14-րդ դար) առաջին անգամ գործածել է *տողադիր* բառը:

Նոր բառերի մեջ ածանցմամբ կազմված բառերի թիվը մեծ չէ: Գրաբարում գործածական էին նախաձանցավոր *գերահրաշ* և վերջածանցավոր հրաշապէս բառերը, որոնց բաղադրիչների միաձուլմամբ Անանունը կազմել է նոր բառ՝ *գերհրաշապէս*:

Մնացած բոլոր բառերը վերջածանցավոր են: Գոյականներ է կազմել –ին (վանգին), -ութին (վերջամնացութին) և -ոց (ճեմարանոց) ածանցներով:

Մրանցից առաջինը սովորաբար կազմում է ձայն արտահայտող, երկրորդը՝ վերացական հասկացություններ ցույց տվող և երրորդը՝ տեղ մատնանշող բառեր: Վերջին կազմությունն արհեստական է, քանի որ –ոց ածանցն ունի նույն իմաստը, ինչ –արան ածանցը, բառին լրացուցիչ ոչ մի իմաստ չի հաղորդել, և դրա հավելումը *ճեմարան* բառին լրիվ ավելորդ է:

-Ական (թնդական), -աւոր (վայելչաւոր) և -իչ (կորզիչ, կարծեցուցիչ) վերջածանցներից առաջին երկուսը ածականներ են կազմել, վերջինը բառին տվել է ենթակայական դերբայի նշանակություն:

Ինչպես տեսնում ենք, Անանունի պատմության մեջ հանդիպող նոր բառերի մեծ մասը հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխան բաղադրություններ են: Մրանցից միայն երկուսն էին հայերենին խորթ՝ հունարան կազմություններ (խորովակսկիծ, սահանակարկաջ):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Երևան, 1971-1979-ՀԱԲ:
2. Անանուն, Պատմութիւն Անանուան, Երևան, 1985-Անան.:
3. Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865-ԱԲ:
4. Թովմա Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Երևան, 1985-Արծր.:
5. Նոր բառգիրք Հայկայեզյան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837-ՆԲՀԼ:

Лексические неологизмы и их словообразовательные модели в сочинении Анонимного историка

Гукасян Шогик

Резюме

Ключевые слова: авторские неологизмы, словообразовательные модели, композиты без соединительных гласных, настоящие композиты, аффиксы, композиты, сочинительная связь, подчинительная связь

Одним из важнейших исторических памятников 10 века является сочинение Анонима, которое дошло до нас как приложение к «Истории» Товмы Арцруни. Долгое время они считались трудом одного автора и публиковались как одно произведение под именем Товмы Арцруни. Причина в том, что «История» Товмы Арцруни осталось неоконченным, к ней прилагалось сочинение Анонимного летописца, которое также является неполным: не хватает начало первой главы и заключительная часть второй главы. На протяжении лет начало «Истории» Анонима рассматривалось как продолжение незавершенной главы сочинения Товмы, а другие фрагменты – как четвертая глава «Истории» Товмы. Основную и значительную часть «Истории» Анонима составляет пласт классического древнеармянского языка. Для нашего исследования представляют интерес слова, впервые зафиксированные в «Истории» Анонима. В произведении находим многочисленные новые слова и словоформы – 36 слов, которые в рукописях предшествующих столетий не были засвидетельствованы. Некоторая их часть, по всей вероятности, – это малоупотребительные слова древнеармянского языка, которые дошли до нас только в составе этого памятника письменности, другая часть – это уже, по-видимому, авторские неологизмы. Новые слова, встречающиеся в «Истории» Анонима, в основном, представляют собой настоящие композиты, соответствующие армянским словообразовательным моделям. Из них только два слова являются чуждыми армянскому языку, так как созданы по грекофильским образцам: жароприскорбие и быстрожурчание. Главные члены выступают в качестве первичных компонентов, что не свойственно армянскому языку.

The Lexical Neologisms of the Vocabulary of Ananun Historian's Work and Their Ways of Formation

Ghukasyan Shoghik

Summary

Key words: *author neologisms, word-formation patterns, compounds without an infix, true compounds, derivation, compounding, coordinating relation, subordinating relation*

One of the important historical sources of the 10th century is the writing of Ananoun which reached our days attached to the Chronicles, written by Tovma Artsruni. For a long time they were both considered to have been penned by the same author and were published as one composition by Tovma Artsruni. The reason for this is that Tovma Artsruni's story is unfinished, and the work of the writer Ananoun is also incomplete, as the beginning of chapter 1 and the last part of chapter 2 are missing. For many years Ananoun's story was seen as the continuation of the unfinished chapter of Tovma's work, and its other parts – as chapter 4 of Tovma's story. The classical layer of grabar makes up the main and substantial part of the vocabulary of Ananoun's work. The words which first appeared in Ananoun's work are of special interest to our research. We have found 36 new words and lexemes in his work which were not found in the literary works of the previous centuries. Apparently, some of these are the rarely used words of the Old Armenian wordstock, which reached us merely through the work of that particular author, the rest are probably author neologisms. In general, the neologisms in Ananoun's work are true compounds, corresponding to the word-formation regularities of Armenian language. Only two of them were Greek formations, alien to Armenian – “khorovakskits” (խորովակսկիծ), “sahanakarkaj” (սահանակարկաջ). The head in these compounds is the first component, which is not typical of Armenian.